ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

09.06.20 N 1/1/06.3/12254-20

Ձեր N _____

«ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ»
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ՍՈՆԱ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ
info@transparency.am

Հարգելի տիկին Այվազյան,

Ձեր 2020 թվականի մայիսի 26-ի հարցման կապակցությամբ հայտնում եմ.

Կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և հաղթահարման նպատակով ՀՀ տարածքում ֆիզիկական անձանց և մասնավոր կազմակերպությունների կողմից օժանդակության ստացման նպատակով բացվել և գործում է պետական բյուջեի եկամտային «Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից պետությանը, կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և հաղթահարման ապահովման համար ֆինանսական աջակցություն» 900005001947 հաշվեհամարը:

Նշված գանձապետական հաշվեհամարի վրա հավաքագրված գումարից Առողջապահության նախարարությանը ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա հատկացվել են ֆինանսական միջոցներ՝ ՀՀ կորոնավիրուսային վարակի (COVID-19) արագ կանխարգելման, վերահսկման, բուժման և հաղթահարման ապահովման նպատակով իրականացված միջոցառումների ծախսերի փոխահատուցման համար:

Առողջապահության նախարարությանը հատկացված գումարների շրջանակներում առողջապահության նախարարի հրամանով վերապրոֆիլավորված

բժշկական կենտրոններում և/կամ մասնաշենքերում իրականացվել են շինարարական աշխատանքներ, վերջիններս վերազինվել են անհրաժեշտ սարքավորումներով, դեղերով և անհատական պաշտպանիչ միջոցներով:

Գլոբալ համավարակի տարածման ներկա զարգացումներով պայմանավորված՝ վերոնշյալ գործընթացները կրում են շարունակական բնույթ, և ամբողջական տեղեկատվություն՝ կառավարության որոշումների հիման վրա հատկացված գումարների ծախսման ուղղությունների մասին այս պահին հնարավոր չէ տրամադրել: Իրավիճակի կարգավորումից և տվյալների ամփոփումից հետո միայն հնարավոր կլինի տրամադրել պահանջվող լիարժեք տեղեկատվությունը:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Հասմիկ Մնացականյան
ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. (+ 374 60) 80 80 03/1703